ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ

(Ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)



Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի և «Պատմաբանասիրական հանդեսի» նախկին գլխավոր խմբագիր, ԳԱԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ Վարդգես Ալեքսանի Միքայելյանի ծննդյան 85-ամյակը: Նա մեր ժողովրդի նվիրյալ այն զավակներից էր, որը ոչ միայն գիտական անուրանալի վաստակով, խմբագրական- հրատարակչական, գիտամանկավարժական եռանդուն գործունեությամբ, այլև մարդկային ու քաղաքացիական հարուստ նկարագրով իր ուրույն և մշտամնա տեղն ունի մեր երախտավորների շարքում: Ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը հանկարծամահ եղավ 2005 թ. մարտի 31-ին՝ 81 տարեկան հասակում: Նրա մահվամբ հայագիտությունը և մեր ժողովուրդը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին:

Վ. Միքայելյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: 1941 թ. տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է շրջանի Քեֆլի և Քոռաղբյուր գյուղերում: Ապա զորակոչվել և 1942-1947 թթ. ծառայել է խորհրդային բանակում՝ սևծովյան նավատորմում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին՝ պարգևատրվելով մեդալներով ու շքանշաններով:

Զորացրվելուց հետո Վ. Միքայելյանը սովորել է Երևանի պետական համալսարանի նորաբաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և 1952 թ. ավարտել գերազանցության դիպլոմով: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ-ի ասպիրանտուրան. այն ավարտել է 1955 թ. և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Գյուղացիության դրությունը և գյուղացիական ելույթները Հայաստանում 1918-1920 թթ.» թեմայով, որը հրատարակվել է 1960 թ.:

1955-1959 թթ. Վ. Միքայելյանն աշխատել է «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում: Հենց այստեղ էլ նա խորամուխ եղավ և տիրապետեց խմբագրական-հրատարակչական աշխատանքի նրբություններին, որոնք այդքան պետք եղան նրան իր հետագա ողջ գործունեության ընթացքում:

1960-ական թվականների սկզբից Վ. Միքայելյանի գիտական և գիտագործնական աշխատանքը կապվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ. 1960-1972 թթ. պատմության ինստիտուտում եղել է ավագ գիտական աշխատող, 1972-1987 թթ.՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր, 1988 թվականից՝ պատմության

ինստիտուտում բաժնի վարիչ, 1999 թ.՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր:

Վ. Միքայելյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն և ընդգրկուն է՝ ներառում է հայ ժողովրդի նոր ու նորագույն շրջանների պատմության բազմաբնույթ հարցեր: Գիտական գործունեության հենց սկզբից նա չգնաց տրորված ճանապարհներով, այլ ձեռնամուխ եղավ չլուսաբանված կամ թերի ուսումնասիրված հիմնահարցերի հետազոտությանը: Նա առաջիններից մեկն էր, որ գիտակցելով հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության կարևորությունը՝ հետազոտման թեմա ընտրեց հայկական գաղթօջախների ուսումնասիրությունը: Վ. Միքայելյանի վաստակը հատկապես անգնահատելի է միջնադարի ամենախոշոր հայ գաղութի՝ Ղրիմի հայկական գաղթօջախների ուսումնասիրման գործում: 1964 թ. լույս տեսավ գիտնականի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» առաջին գիրքը: Այն ներառում էր այդ պատմության միջնադարյան շրջանը և ավարտվում 1778 թ. ռուսական կառավարության կողմից ղրիմահայերի տեղահանությամբ, գաղթօջախի ժամանակավոր մարումով և Դոնի ափին Նոր Նախիջևանի հայկական գաղութի հիմնադրմամբ: Վ. Միքայելյանն այս աշխատությունը 1965 թ. պաշտպանեց որպես դոկտորական ատենախոսություն:

Այնուհետև իրար հաջորդեցին Ղրիմի հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրությանը նվիրված՝ Վ. Միքայելյանի հետևյալ մենագրությունները. 1970-ին հրատարակեց «Ղրիմի հայկական գաղու- թի պատմություն (1801-1917)» աշխատության 2-րդ գիրքը, 1974 թ.-ին՝ “На крымской земле”, 1989 թ.-ին՝ «Ղրիմահայոց պատմություն» և 2004 թ.-ին՝ “История крымских армян” (Симферополь).

Ղրիմի հայ գաղթօջախի պատմությունն ուսումնասիրելիս Վ. Միքայելյանը արժեքավոր նյութեր է հավաքել ռուսական ռազմածովային նավատորմի ծովակալ, ծագումով ղրիմահայ Ղազար Մարկովիչ Սերեբրյակովի կյանքի ու գործունեության վերաբերյալ: 1979 թ. լույս տեսավ պատմաբանի «Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան: Կյանքն ու գործունեությունը)» աշխատությունը: Մենագրության մեջ լուսաբանվում են հայ ծովակալի տեղն ու դերը ռուսական սևծովյան նավատորմի գործունեության պատմության մեջ, հատկապես Ղրիմի պատերազմի ընթացքում:

Ի դեպ, ղրիմահայոց պատմությանը նվիրված գրքերով Վ. Միքայելյանը վերհանել է հայ ժողովրդի միջազգային կապերի (հայ-ռուսական, հայ-ուկրաինական, հայ-լեհական, հայ-իտալական) պատմությունը: Այս առումով խոշոր արժեք ունեն նաև «Հայի-տալական առնչություններ, Ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին» (1974) ժողովածուն և «Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր)» (2000 թ.) մենագրությունը, որոնցում բացահայտել է այն մեծ դերը, որ կատարել է հայկական այս գաղթօջախը միջազգային առևտրական և այլ բնույթի հարաբերություններում:

Նկատենք, որ հետագա տարիներն ևս Վ. Միքայելյանը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել հայ գաղթօջախների պատմությունը: Գաղթավայրերի պատմության գծով մեծ երախտիք ունեցող պատմաբանի նախաձեռնությամբ և խմբագրությամբ նախապատրաստվել ու 2003 թ. հրատարակվել են «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորյակի առաջին և երկրորդ հատորները: Ժամանակագրական առումով եռահատորյակն ընդգրկում է միջնադարից մինչև 1920 թ. ընկած ժամանակամիջոցը: Դրանք կազմված են տարածաշրջանային սկզբունքով. առաջին հա-

տորը նվիրված է սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութների պատմության լուսաբանմանը, երկրորդը՝ Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութների: Երրորդ հատորը նվիրված է լինելու Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութներին:

Վ. Միքայելյանի գիտական ուսումնասիրության մյուս կարևոր բնագավառը, որտեղ նա մեծ վաստակ ունի, Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման ուղղությամբ նրա անգնահատելի ծառայությունն է: 1960-ական թվականների վերջերից Վ. Միքայելյանն արցախյան հիմնահարցի արդար լուծման ազնիվ սատարողներից էր, այն սակավաթիվ պատմաբաններից, որոնք խոսքով ու գրչով աշխատում էին հանրությանը ներկայացնել այդ խնդրի սկզբնավորման հանգամանքներն ու հետևանքները: Ավագ սերնդի ակադեմիկանների և մտավորականների հիշողության մեջ թարմ է 1969 թ. Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտում կայացած կուսակցական ժողովը: Ինը ժամ տևած այդ ժողովում, որտեղ քննվում էր ազերի Զ. Բունիաթովի ու նրա գործակիցների կողմից Ղարաբաղի պատմության նենգափոխման մերկացմանը նվիրված Վ. Միքայելյանի համարձակ ու բովանդակալից զեկուցումը (ի դեպ, նա ինստիտուտի կուսակցական կազմակերպության քարտուղարն էր), որոշում ընդունվեց դիմել ԽՄԿԿ - Կենտկոմ՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը քննարկման առարկա դարձնելու խնդրանքով և բնիկ հայկական այդ երկրամասը Հայաստանին վերադարձնելու պահանջով: Այդ օրերի համար կատարվածը, մեղմ ասած, հանդուգն քայլ էր… Վերհիշենք նաև, որ Վ. Միքայելյանն իր խմբագրած «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1978 թ. 5-րդ համարում տպագրեց “Об очередных “размышлениях” З. М. Буниятова” վերնագրով հոդված-գրախոսությունը (հեղինակներ՝ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ղանալանյան, Լ. Խաչիկյան, պատմ. գիտ. դոկտոր Ա. Տեր-Ղևոնդյան), որտեղ դիմակազերծվեց ազերի պատմաբանի հակահայկական ու հակագիտական գործունեությունը: Այս ամենից հետո բնական է, որ անվանի գիտնականն ու քաղաքացին պետք է լիներ արցախյան շարժման առաջին շարքերում: Բոլորին է հայտնի, որ շարժման վերելքի օրերին՝ 1988 թ. մարտի 2-ին, Երևան եկած ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Ա. Լուկյանովին և Վ. Դոլգիխին հանձնված Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ գիտական միակ փաստաթուղթը Վ. Միքայելյանի գրած բովանդակալից ու հիմնավոր տեղեկանքն էր: Ի դեպ, պատմագիտական այս փաստաթուղթը “Некоторые вопросы истории Нагорного Карабаха” վերնագրով և մասնակի լրացումներով (պատմաբան Լ. Խուրշուդյանի հեղինակակցությամբ) լույս տեսավ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1988 թ. 4-րդ համարում: Հետագա տարիներին նա ԼՂ-ի հարցի վերաբերյալ բազում հոդվածներ տպագրեց հանրապետության, սփյուռքահայ և օտարալեզու մի շարք պարբերականներում: 1992 թ. լույս ընծայվեց “Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов” խորագրով ժողովածուն, որի կազմողների ղեկավարը, պատասխանատու խմբագիրը և ընդարձակ ներածության հեղինակը Վ. Միքայելյանն էր: Ժողովածուի փաստաթղթերն ու նյութերը հավաստում են, որ հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանը զոհաբերվել է համաշխարհային հեղափոխության հաղթանակի ցնորական քաղաքականությանը, որի «իրագործման» ճանապարհին ոտնահարվել են հայության ազգային իրավունքները՝ հօգուտ Թուրքիայի և Ադրբեջանի՝ անդամահատելով Հայաստանի տարածքները:

Հաջորդ բնագավառը, որտեղ Վ. Միքայելյանն ունի անուրանալի ավանդ, Հայկական հարցը և Օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպա-

նության ուսումնասիրությունն է: 1989 թ. Վ. Միքայելյանը մեկնեց Բոնն՝ գերմանական արխիվներում հայկական ցեղասպանության մասին նյութերի ուսումնասիրման համար: Գերմաներենի իմացությունը նրան հնարավորություն տվեց կարճ ժամանակամիջոցում ժողովել ավելի քան 3500 միկրոկադրեր, որոնցից 1000-ից ավելին տեղ են գտել 1995-ին նրա կազմած "Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии" վերնագրով ժողովածուում: Ժողովածուի առաջաբանի, ներածության և ծանոթագրությունների հեղինակը ևս Վ. Միքայելյանն է: Փաստաթղթերի մեծածավալ այս հավաքածուն լրացնում է Յո. Լեփսիուսի 1919 թ. Պոտսդամում հրատարակած՝ Թուրքիայում հայոց ցեղասպանության վերաբերյալ "Deutschland und Armenien, 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke" փաստաթղթերի ժողովածուն: Ինչպես իրավացիորեն նկատվել է, Վ. Միքայելյանին տքնաջան և պատասխանատու այս գործին մղել է այն իրողությունը, որ վերջին տարիներին թուրքական կառավարող շրջանները, պաշտոնական և ոչ պաշտոնական պատմագրությունը, քարոզչական ողջ մեքենան ջանում են «ապացուցել», որ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանություն չի եղել: Ավելին, նրանք անգլիական, ֆրանսիական ու ամերիկյան արխիվային փաստաթղթերը համարում են միտումնավոր: Ստեղծված կացության մեջ, բնական է, առաջնահերթ նշանակություն է ստանում կայզերական Գերմանիայի արխիվներից և, առաջին հերթին, նրա արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվից պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի հրապարակումը, մի երկիր, որի կառավարության հանցավոր թողտվությամբ և աջակցությամբ տեղի է ունեցել XX դարի առաջին ցեղասպանությունը: Ահա կարևոր մի խնդիր, որի լուծման համար ակադեմիկոսի ջանքերը, ի վերջո, պսակվել են հաջողությամբ:

Ի դեպ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հիշյալ ժողովածուն 2004 թ. հրատարակեց նաև գերմաներենով՝ "Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919). Dokumente aus dem politischen Archiv des deutschen auswärtigen Amts. Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan" վերնագրով (ավելի քան 40 մամուլ): Սույն ժողովածուի որոշ փաստաթղթերի թարգմանությունը և հրատարակությունը հայերեն (կրկին 2004 թ.) իրականացրել է ՀՀ ԳԱԱ ցեղասպանության ինստիտուտ-թանգարանը՝ «Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդումներում (1915-1918), ըստ կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի. կազմող և առաջաբանի հեղինակ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Ա. Միքայելյան» խորագրով:

Նկատենք նաև, որ Վ. Միքայելյանը 1980-ական թվականներից հայերի ցեղասպանության մասին, այն ժխտողների ու կեղծարարների դեմ տասնյակ հոդվածներ է հրապարակել, գրքեր հրատարակել, ժողովածուներ կազմել, որոնք մնայուն գործեր են: Այսպես, 1991 թ. նա հրատարակեց "Генрих Фирбюхер. Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа", 1997-ին՝ «Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915)» գրքերը և այլն:

Ինչպես տեսնում ենք, մեր իրականության մեջ չի եղել քիչ թե շատ նշանակալից որևէ հարց, իրադարձություն, որը շրջանցեր Վ. Միքայելյանին կամ էլ չարժանանար նրա հատուկ ուշադրությանն ու վերաբերմունքին: «Հատուկ» ենք ասում, քանզի նա հենց այնպես, ի միջի այլոց, ոչ մի

գործի չէր ձեռնարկում, արածը լինում էր նոր խոսք, նոր մոտեցում, արխիվային նորահայտ նյութերի հրապարակում: Այս վերջին առումով հատկանշական է Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ ակադեմիկոսի կազմած և հրատարակած "Почему и как российские евреи принимали христианство по армянскому обряду (1910-1915 гг.). Документы и материалы ЦГИА России. Подборка" ժողովածուն: Փաստաթղթերի այս ուշագրավ հավաքածուի ի հայտ գալը երկար ժամանակ գտնվում էր հայ և ոչ միայն հայ հասարակության սևեռուն ուշադրության կենտրոնում:

Գիտական գործունեությունն ակադեմիկոս Վ. Միքայելյանը զուգակցել է գիտախմբագրական-գիտակազմակերպչական եռանդուն գործունեությանը: Խմբագրական-հրատարակչական աշխատանքը Վ. Միքայելյանի համար սրբազան գործ էր, նրա տարերքը, ինքնաբուխ նվիրումը, առանց որի նա չէր պատկերացնում իր կյանքը: Իրավամբ, նշանավոր պատմաբանը գիտական-խմբագրական տարիների իր տքնաջան և շնորհակալ գործունեությամբ, պատմաբանասիրական խոր իմացությամբ և նուրբ դիտողականությամբ անջնջելի հետք է թողել մեր իրականության մեջ: Ինչպես արդեն հիշատակեցինք, դեռևս 1955-1959 թթ. աշխատել է «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում: Երկար տարիներ եղել է ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խըմբագիրը, ամսագիր, որտեղ հրապարակված ուսումնասիրությունները շոշափելի ավանդ են բերել հայ մշակույթի և հայագիտության շատ ու շատ արմատական և կնճռոտ հիմնախնդիրների լուծման գործում. պատմության, լեզվի, գրականության, հնագիտության և արվեստի հարցերը շարունակ գտնվել են պարբերականի ուշադրության կենտրոնում՝ նրա էջերում ստանալով գիտական խոր և անկողմնակալ լուսաբանում: Այսպես, հիշատակելի են, 1980-1981 թթ. ամսագրի մի շարք համարներում «Բանավեճ» խորագրի ներքո տպագրված հոդվածները «Հայ ժողովրդի ծագումն ու կազմավորումը» հիմնախնդրի շուրջ, որին ակտիվորեն մասնակցեցին, մասնավորապես, ճանաչված մասնագետներ, ինչպիսիք էին՝ Օ. Շիրոկովը (Մոսկվա), Վալերի Խաչատրյանը, Գեորգի Կլիչկովը (Մոսկվա), Ջոն Գրեպինը (ԱՄՆ), Ասատուր Մնացականյանը և ուրիշներ:

1989-1990 թթ. Վ. Միքայելյանը հիմնադրեց և խմբագրեց «Գոյամարտ» շաբաթաթերթը, որի առաջնահերթ խնդիրը պատմահայրենասիրական բնույթի հարցերի և արցախյան հիմնախնդրի լուսաբանումն էր:

1999 թ. Վ. Միքայելյանը նշանակվում է հայագիտական ու հասարակագիտական «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր: Հանդեսի հիմնադիր և մինչև 1999 թ. անփոփոխ խմբագիր, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանից հետո խմբագրել այս հանրահայտ պարբերականը չափազանց պատասխանատու գործ էր, որը, ինչպես ժամանակը ցույց տվեց, Վ. Միքայելյանը կատարեց փայլուն: Իր համարձակ, նախաձեռնողական քայլերով նա հայագիտական այս հանդեսի հեղինակությունը մի նոր մակարդակի բարձրացրեց: Վերոհիշյալ բոլոր պարբերականներում Վ. Միքայելյանը հանդես է եկել և՛ որպես խմբագիր, և՛ որպես ակտիվ հեղինակ:

Վ. Միքայելյանը խմբագրական գործունեությունը հիմնականում օգտագործել է նաև գիտական երիտասարդ, կարող ուժեր կրթելու, ճիշտ հունի մեջ դնելու համար: Հարկ է նկատել, որ Վ. Միքայելյանը ընդհանրապես անչափ ուշադիր էր գիտական երիտասարդ կադրերի նկատմամբ, խրախուսում էր նրանց, վերցնում իր հովանու տակ: Նրա

ղեկավարությամբ պաշտպանվել է մեկ տասնյակից ավելի թեկնածուական և դոկտորական ատենախոսություն:

Վ. Միքայելյանի գործունեության մեջ նշանակալի տեղ է գրավել նաև մանկավարժական աշխատանքը հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մասնավորապես, նա շուրջ երկու տասնյակ տարի հատուկ դասընթացներ է կարդացել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետում, վաստակել ուսանողության սերն ու հարգանքը:

Վ. Միքայելյանը եղել է գիտական մի շարք խորհուրդների անդամ, գործուն մասնակցություն է ունեցել «Հայկական Սովետական Հանրագիտարանի» ստեղծման գործում, եղել է կազմկոմիտեի, իսկ հետագայում՝ գիտաճյուղային խորհրդի անդամ: Վ. Միքայելյանը պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով: Նրա գիտական վաստակը բարձր է գնահատվել. 1996 թ. նա ընտրվել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Ավարտելով մեր ասելիքը անվանի հայագետի ու հայրենանվեր քաղաքացու մասին՝ մի քանի խոսք նրա մարդկային նկարագրի վերաբերյալ. Վարդգես Միքայելյանի մեջ միահյուսվել էին տաղանդավոր գիտնականը, գիտության կազմակերպիչը, հմուտ խմբագիրն ու հրապարակախոսը, իսկական հայկական ընտանիքի հայրը: Գիտական հասարակայնության և մեր մտավորականության մեջ նա առանձնանում էր իր բնատուր տաղանդով, մեծ էրուդիցիայով, բացառիկ աշխատասիրությամբ, անսահման իմացությամբ, անմիջական ու պարզ, ընդառաջող և գործունյա բնավորությամբ. նրա անհանգիստ ու որոնող ոգին դադար չուներ:

Տողերիս հեղինակը մեկն է Վ. Միքայելյանի բազում աշակերտներից: Խորին երախտագիտությամբ պարտավոր եմ ասել, որ նրա հետ շուրջ քառորդդարյա ամենօրյա շփումները, փաստորեն, կազմավորեցին ու ձևավորեցին իմ աշխարհըմբռնումը: Խոնարհվելով այդ պայծառ, շիտակ, իր համոզմունքներում անկաշառ, սկզբունքային մարդու հիշատակի առաջ՝ պարծանքով եմ համակվում, որ եղել եմ նրա աշխատանքային գործընկերը:

ԶԱՔԱՐՅԱՆ ԱՆ. Հ.
Բանասիրական գիտությունների դոկտոր